ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ

Ք.Երևան

15.03.2024թ.

«Հայաստանի ֆիզիկական կոըլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ ՀԽ) հերթական նիստը տեղի ունեցավ ՀՖԿՍՊԻ գիտական խորհրդի նիստերի դահլիճում՝ հիբրիդային ձևաչափով (Երևան, Ալ.Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ)։

Նիստին ներկա էին 20 անդամներից 13-ը՝

Կարեն Գիլոյանը – ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ, ՀԽ նախագահ

Գոհար Մամիկոնյանը – Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)

Սերգեյ Աբրահամյան – ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ

Արսեն Հակոբյանը – ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության ուսանողների աջակցության բաժնի պետ

Էդուարդ Քալանթարյանը – Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մարզական մեկնաբան (համաձայնությամբ)

Հարություն Յավրյանը – ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ (համաձայնությամբ)

Անահիտ Բարսեղյանը – Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս

Լիանա Դուդուկչյանը – Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի սովորող

Լաուրա Միրզոյանը – Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Ժիրայր Դավեյանը - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Գայանե Չիլոյանը - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Հեռախոսակապի միջոցով նիստին մասնակցել են՝

Սամվել Գևորգյանը - Ն. Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն (համաձայնությամբ)

Ռոբերտ Խաչատրյանը - Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ (համաձայնությամբ)

Բացակայում էին՝

Արսեն Միխայլովը – ՀՀ վարչապետի օգնական

Դավիթ Մոսինյանը – «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրեն (համաձայնությամբ)

Էրիկ Երվանդյանը - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզչամանկավարժականֆակուլտետի սովորող

ՀԽ կազմից դուրս գալու վերաբերյալ դիմում են ներկայացրել՝

Մարտին Ալիխանյանը - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս

Մխիթար Խաչատրյանը - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս

Եղիշե Դավթյանը - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզախաղերի ամբիոնի դասախոս

Վարինկա Ավագիմյանը - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս

Օրակարգ

1. ՀՖԿՍՊԻ-ի 2024 թվականի բյուջեի ներկայացում և հաստատում:

(Զեկուցող՝ ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյան)

2. Արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի հայտարարում:

(Զեկուցող՝ ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյան)

3. Նախկին ռեկտոր Դ. Խիթարյանի և Հոգաբարձուների խորհրդի միջև աշխատանքային վեճի դատաքննությանը պատշաճ մասնակցություն ապահովելու նպատակով փաստաբանական ծառայության ձեռքբերում:

(Զեկուցող՝ Կարեն Գիլոյան)

4. Այլ հարցեր:

1. Նախքան օրակարգի հաստատումը ՀԽ անդամ Գոհար Մամիկոնյանը առաջարկեց այլ հարցերի շարքում քննարկել նախորդ (28.12.2023թ.) ՀԽ նիստի ժամանակ քննարկված և ընդունված որոշումների մեջ տեղ գտած վրիպակի մասին հարցը: Ինչպես նաև առաջարկեց սահմանել նիստի վարման ընթացակարգ:

2. Ռեկտորի ժ/պ Տիգրանը Սիմոնյանը խնդրեց ելույթի հնարավորություն տալ ԿԳՄՍ նախարարության կողմից ՀՖԿՍՊԻ ուղարկված գրության վերաբերյալ հարցի քննարկման նպատակով:

3. Ելույթի հնարավորություն խնդրեց ՀՖՍԿՊԻ Որակի ապահովման բաժնի պետ Գոհար Մուրադյանը:

Առաջարկվեց ելույթի համար տրամադրել 3 րոպե, իսկ քննարկման համար՝ 15 րոպե ժամանակ:

Օրակարգի փոփոխությունը և նիստի վարման ընթացակարգը ՀԽ նախագահ Կարեն Գիլոյանը դրեց քվեարկության:

Հաստատվեց միաձայն:

Հարց 1

ՀՖԿՍՊԻ ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյանը հիմնական ուղղություններով ներկայացրեց բուհի 2024-թ-ի բյուջեի նախագիծը և առաջարկեց բյուջեի ծախսային և մուտքային հոդվածներն ավելի մանրամասն ներկայացնելու համար խոսքը տալ ֆինանսավարչական գծով պրոռեկտոր Գնել Վերանյանին: Գ. Վերանյանը ներկայացրեց բյուջեի նախագիծը բացվածքով՝ եկամտային և ծախսային հիմնական ուղղություններով:

Բյուջեի հաստատման վերաբերյալ հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Հարց 2

ՀՖԿՍՊԻ ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյանը ներկայացրեց արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ կազմակերպելու վերաբերյալ հարցը և խնդրեց ՀԽ–ի համաձայնությունը՝ արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ հայտարարելու վերաբերյալ:

ՀԽ նախագահ Կարեն Գիլոյանը հորդորեց մրցույթի անցկացման գործընթացը կազմակերպել բացառապես օրենքի տառին համապատասխան:

Հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Հարց 3

ՀՖԿՍՊԻ նախկին ռեկտոր Դավիթ Խիթարյանի և ՀԽ միջև ծագած աշխատանքային վեճի դատաքննությանը պատշաճ մասնակցություն ապահովելու նպատակով փաստաբանական ծառայության ձեռքբերման վերաբերյալ հարցը ներկայացրեց ՀԽ նախագահ Կարեն Գիլոյանը: Կ. Գիլոյանը ներկայացրեց ՀՖԿՍՊԻ նախկին ռեկտորի կողմից ՀԽ–ի անդամների նկատմամբ հնչեցվող մեղադրանքները, նաև տեղեկացրեց, որ ՀԽ 28.12.2023թ. նիստի որոշումները Դ. Խիթարյանը վիճարկել է դատարանում և նշեց, որ փաստաբանական ծառայությունը հնարավորություն կտա գրագետ ներկայացնել ՀԽ դիրքորոշումը և ՀԽ կողմից ընդունված որոշումների օրինաչափությունը:

Համաձայն ՀԽ աշխատակարգի 1.4. կետի՝ Խորհրդի աշխատանքների հետ կապված ծախսերը կատարվում են Ինստիտուտի միջոցների հաշվին, ուստի քննարկման է ներկայացվում ՀՖԿՍՊԻ միջոցների հաշվին ՀԽ աշխատանքների իրականացման համար փաստաբանական ծառայության ձեռքբերման հարցը:

Հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

4. Այլ հարցեր

Հարց 1

ՀԽ անդամ Գոհար Մամիկոնյանը խորհրդի անդամներին զեկուցեց, որ 28.12.2023թ. ՀԽ նիստի արձանագրության հիմքով ընդունված որոշման մեջ տեղ է գտել տեխնիկական վրիպակ (Որոշում 3-Ա): ՀԽ նիստի արձանագրության օրակարգի 4-րդ հարցով լսվել և որոշում էր կայացվել ինստիտուտի ռեկտոր Դ. Խիթարյանին անվստահություն հայտնելու հիմքով լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու հարցը, որը ընդունվել էր միաձայն:

Ի կատարումն ՀԽ որոշման, նույն օրը ՀԽ նախագահի կողմից ստորագրվել է Որոշում 3-Ա, որը չնայած հղում է պարունակում 28.12.2023թ. ՀԽ թիվ 9 նիստի արձանագրությանը, սակայն ազատման հիմքում անվստահություն հայտնելու

փոխարեն նշված է կարգապահական տույժի կիրառման մասին, որը տեխնիկական վրիպակի արդյունք է:

Նկատի ունենալով, որ ՀԽ խորհրդի նախագահն ուղղակի իրավական առումով ձևակերպում և ստորագրում է խորհրդի կողմից ընդունված որոշումը և չի կարող ձևափոխել դրա բուն էությունը, ինչպես նաև հաշվի առնելով Որոշում 3-Ա տեղ գտած վրիպակը, որն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀԽ թիվ 9 նիստի արձանագրության բովանդակությանը՝ առաջարկվում է.

1. ուղղում կատարել 28.12.2023թ. 3-Ա որոշման տեքստում՝ հետևյալ բովանդակությամբ. «Որոշման 1-ին կետի «Դավիթ Խիթարյանի» բառերից հետո «նկատմամբ կիրառել կարգապահական տույժ» բառերը կարդալ «լիազորությունները ավստահություն հայտնելու հիմքով վաղաժամկետ դադարեցնել՝» բովանադակությամբ,
2. Որոշման ուղղված տեքստը հրապարակել ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքում և պատշաճ ծանուցել Դավիթ Խիթարյանին՝ տրամադրելով բնօրինակ փաստաթղթի օրինակը:

Հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Հարց 2

Ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյանը զեկուցեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ՀՖԿՍՊԻ ուղարկված գրությունն առ այն, որ ՀՖԿՍՊԻ բակային տարածքի հարևանությամբ շինարարություն իրականացնող կազմակերպությունը դիմել է Պետական գույքի կառավարման կոմիտե և խնդրել իր օգտին օտարել 40 ք/մ տարածք, որը գտնվում է ՀՖԿՍՊԻ տնօրինման ներքո:

ՀԽ խորհուրդը քննարկեց հարցը և առաջարկեց ստեղծել ՀՖԿՍՊԻ աշխատակիցներից կազմված աշխատանքային խումբ, ուսումնասիրել բուհի կարիքների համար այդ տարածքի օգտագործումը և ՀԽ ներկայացնել եզրակացություն, որի հիման վրա էլ ՀԽ կարող է որոշում կայացնել և համապատասխան առաջարկություն ներկայացնել լիազոր մարմնին:

Հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Հարց 3

ՀՖԿՍՊԻ որակի ապահովման բաժնի պետ Գոհար Մուրադյանը հանդես եկավ ելույթով, որի համար ՀԽ նրան տրամադրեց 15 րոպե ժամանակ: Գ.Մուրադյանը ներկայացրեց ՀԽ նախագահին ուղղված դիմում–բողոքի մանրամասները, և ՀԽ այլ անդամների ուշադրությունը հրավիրեց բուհում տիրող իրավիճակի վերաբերյալ:

Հարցը լսվեց և ընդունվեց ի գիտություն:

Օրակարգային հարցերը սպառելուց հետո ՀԽ նախագահ Կարեն Գիլոյանը խոսեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող Բարձրակարգ մարզիկների հոգեբանական սպասարկման ծրագիրը ՀՖԿՍՊԻ–ում կազմակերպելու մասին: Կ. Գիլոյանը երկու տարիների ընթացքում բուհում իրականացված ծրագիրը գնահատեց ոչ արդյունավետ և առաջարկեց հանձնարարել ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյանին ներկայացնել ծրագրի կազմակերպման համար բուհին տրամադրված ֆինանսական միջոցների ծախսերի և ծրագրի իրականացման արդյունավետության վերաբերյալ հաշվետվություն:

Առաջարկությունն ընդունվեց ի գիտություն:

ՀԽ նախագահ՝ Կարեն Գիլոյան

ՀԽ քարտուղար՝ Գայանե Չիլոյան